

«ԱՆԱՀԻՏ»Ի ՎԵՐԵՐԵՒԹԻՈՒՄԸ

Անահիտի ներկայ միացեալ թիւը, որ լրյա կը տևանէ Ֆրանսայի գերման գրաւման հետեւանքով այդ հանդէսի վեց տարի դադարումէն յետոյ, կը բաղկանայ երեք մասէ։ Առաջին մասը տպուած էր արդէն 1940ին, երբ զերան բանակը մտա Փարիզ եւ որոշեցի գալքեցնել թերթիս հրատարակուած մինչեւ Գերմանացոց պարաւութիւնն ու Ֆրանսայի պատագորումը։ Երրորդ մասին ձեռապէիրները ամբողջապէս պատրաստ էին և պետի կազմէին Անահիտի 1940ի Յուլիս-Դեկտեմբերը այսներու միացեալ թիւը, եթէ Փարիզի գրաւման ալէտը պատահած ըլլապը։ առոնք մեծ մասամբ նոյն իսկ շարուած էին։ Թէեւ Քրոնիկս նախքուած է դէպքերու եւ դէմքերու որոնք արդէն անցեալին կը պատկանին, ևս պարագ համարեցայ հրատարակել աշխատութիւնը քոյ կատարեր մեծ այդ շրջանի իրադարձութեած մեկնարանման համար։ Երրորդ մասը կը կազմուի գրական կամ բանասիրական էջերէ զոր աշխատակիցներ ինձի դրկած էին արդէն եւ կամ Փարիզի ազատագրու-

մէն յետոյ դրկեցին, ինչպէս եւ այն երեք նահաւակ հայ գրողներու, Գեղամ Աթմանեանի, Միսաք Մանուչեանի եւ տիկին Լուիզա Ասլանեանի հերասական դէմքերուն նուիրուած յօդուածէն ու ազատագրումէն յետոյ շարադրուած Քրոնիկէ։

Ազատագրումէն անմիջապէս յետոյ որոշած էի եւ կը փախաքէի հրատարակել այս միացեալ թիւը, բայց կը ցաւմ որ ինչ ինչ դժուարութեանց առջեւ գտնաւելով՝ չկրցայ աւելի չուտ այդ փափաքի գահացում տալ եւ այդ որոշումն որոշացրել։

Այսուհետեւ Անահիտը պիտի հրատարակեմ տարուած մէջ երկու միացեալ թիւի մեւնի առակ։ Ճնորհակաթավթիւնները կը յայտնեմ բոլոր այն աշխատակիցներուն ու քարեկամներուն որ գրական էջեր կամ բանասիրական յօդուածներ փութացն դրկել ինձի, եւ կամ այլ ձեւով ինձի աջակցելով՝ թերթիս վերերեւումը դիւրացուցին։

Ա. Զ.



ՎՐԵՊԱԿ

Ներկայ թիւի էջ 35, Ա. սիւնակ, տող 12,
Լուսաբերի, ուղղել Լուսաբերի。
Նոյն սիւնակ, տող 16, կը գտնուի, ուղղել
կը գտնուին։